Թիւ · 52 ·

# ԴԻՏԱԿ ԲԻՒԶԱՆԴԵԱՆ

## Ի ԽՆԴՐՈՅ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԱՐՇԱՐՈՒՆԵԱՑ

1813 ·

13 · 14 · 15 · ՅՈՒԼԻՍ ։

### ՍԱՔՍՈՆԻԱ ·

Պաուցէն · 30 Մայիսի ։

Մէկ քանի տեղեկութիւններ տանք պատերազմի վը՝ որ պատահեցաւ Պաուցձէն ու անոր շրջանակները՝ Մայիսի 8էն մինչև 23՝ ինչպէս որ կըպատմէնէ մէկ աչքով տեսնօղ մարդը ։

Ամսուս 8ին Լուցձէնի պատերազմէն ետև դաշնակից զօրքը ետև սկսաւ քաշվիլ ։ Պռուսի Թագաւորը ու Աղէքսանդր Մոսկովին կայսրը եկան աս քաղաքը · Պռուսին Թագաւորը խիստ շատ տրտմած կերևնար, ու փէք քիչ անգամ տունէն դուրս կելլար ։ Աղէքսանդր Մոսկովին կայսրը ամմէն օր առաւօտը կանուխ ձի հեծած կըպըտըտէր չորս կողմը քննելու համար զօրաց կարգը, բանակին դիրքը ։ Ինչպէս որ կըլըսվինէ աս Թզուրներուն մօտիկ եղած անձինքներէն, մէկըմէկու մէջ գժտութեն խռխռ ունին ։

Պիսքհօսվէրտայէն զարնըվիլներէն ետև կայսրը ու Պռուսին Թագաւորը Թողուցին իրենց բուն բանակը Պաուցձէն ։ Նաբօլէօն կայսեր բանակնալ եկաւ Վուրճըհէն ։ Ամսուս 13ին, դաշնակիցներուն կողմէն ելան բարձր զանգակատուններու ու Օսթէմպուսկի պալատին աշտարակներուն վրայ՝ քննելու համար տեսլականով Ֆրանսըզի բանակին դիրքը, մինչև մայիսի 14ը Մոսկովները Սերէկ գետին ձախ եզերքը երկիր դրաւելու պաշտ ըմելու հետ էին ։ 15 ին Ֆրանսըզները վազեցին Մոսկովներուն վրայ · առջի բերանը խելքէ դուրս կըտրիճութիւ դէմ դրին Ֆրանսըզներուն, բայց վերջապէս յաղթըվեցան ու առտոխ անդին ցրուէլով բռնադատվեցան անցնիլ Սերէկ գետին աջ կողմը ։ Պատերազմի ժամանակ Պաուցձէնին բնակիչները զարհուրած կեցերեին՝ երբոր կըտեսնէին գետին երկու եզերքին վրայ եղած զօրաց զարհուրելի կրակը, ու կըլսէին երկու կողմի յուսահատած սրտով պատերազմօղ զօրաց աղա-

ղաղակը, ու Թօփերուն շամաթան՝ որ կար- ծէր մարդ թէ պիտոր փլչըներ Պաուգձէնը հիմնովին. Ֆրանսըզները միշտ կըջանային երկիր վառտըլկը. Թօփի ձայներուն արձագանգը կուգար մօտիկ լեռներէն որով կըրկնապատիկ կըշատցընէին պատերազմին աղաղակը, հաւան պայծառ ըլլալով աս գիշեր, ամմէնքը իրենց տանիքներուն վրայ ելած սէյիր կընէին պատերազմը, ասոնցմէ ետև եղաւ 19ին, 20ին, 21ին պատերազմները. (Գազէթ. Ֆրանս.)

Լիբոնիա. 8 Յունիսի.

Պօստեղի գազէթաները կըսեն թէ յունիսի 6ին բերան 'ի բերան պիտոր խօսին, Նէմցէին կայսրը, ու Նաբօլէօն Ֆրանսըզին կայսրը Կիթաքհին մէջ.

(Օրագր. Փարիզու.)

Տրէզտա. 13 Յունիսի.

Նաբօլէօն կայսրը մինչև հիմայ հոս է, ամմէն օր սահաթը 10ին կըթութն ընել կուտայ զօրաց՝ ուրտեղ որ ներկայ կըգըտնուին ամմէն քաղքի պահապան զօրաց օֆֆիչիալները. աս կըթութնը կըլլայ Օսթէր-Վիէսէ դաշտին մէջ. (Մօնիթօռ.)

Սաքսոնիայի սահմանագլուխներէն. 10 Յունիսի.

Թիւհօսնին պահապան զօրքը՝ որոնք Մոսկովին ձեռքը յանձնելով բերդը ճամբայ ելան երթալու միանալու Ֆրանսըզին զօրացը հետ, ուշացան քիչմը վերին Լուզաձիային մէջ, վն զի մոսկովին ճէնէրալները թող չտըվին որ անցնին Պաուգձէնէն՝ ուրտեղ որ կարգաւորված էր իրենց բանակը. աս պատճառաւս 8ը օրմը չափ կեցան աս զօրքը Պանգձլաու, որ է մօտիկ Օթթէնտօրֆին.

Նէմցէին կայսրը յունիսի 4ին հասաւ Պրաունաու՝ որ է Սիլէզիայի սահմանագլուխները. (Օրագր. Փարիզու.)

ՊԱՎԻԵՐԱ.

Ինսբրուք. 5 Յունիսի.

Ամսուս 5ին, առաւօտեան սահաթը 11 ½ եղաւ մէկ սաստիկ շարժմը՝ որ քշեց մէկ քանի երկվայրկեան. աս շարժը էր հարաւային կողմանէ դէպ 'ի հիւսիս, բայց մէկ երևելի վնասմը չհասուց երկրին.

18ին.

Աս տէրութեան կառավարութիւնը հրամայեց որ ժողվըվի հնգհարիւր ձիեր. աս ձիերը յուլիս ամսու մէջ խրկըվի պիտոր Վիէննա, Մանդովա, ան զօրաց գործածութեան համար՝ որ կըժողվին ու կըպատրաստվինկոր աս երկու քաղաքներուն շրջանակները.

Նօռէնպէրկ. 9 Յունիսի.

Կըխօսվիկոր թէ ժողովը որ պիտոր ըլլայ Բրակայ խաղաղութեան վրայ խօսելու համար, հիմայ պիտոր փոխադրըվի Տրէզտա. աս պատճառաւս զօրաց ճամբան պիտոր փոխվի որպէս զի ասկից զօրք չանցնի, այլ պիտոր անցնին Մէսսէնին ու Քամէնձին մէջէն. (Օրագր. Փարիզու.)

11ին.

Նէմցէին կայսրը հասաւ Կիթաքհին ու ինչպէս որ կըհաստատվիկոր նէ հոս տեղը պիտոր խօսի բերան 'ի բերան Ալէքսանդր Մոսկովի կայսեր, ու Նաբօլէօն Ֆրանսըզի կայսեր հետ.

Թէհօսն բերդին պահապան զօրքը, որ Մոսկովին ձեռքը յանձնելով բերդը ճամբայ ելան կէսմը Պալիցաւ, կէսմը Ֆրանսա երթալու համար, հասան Կօրլիդձ՝ որ է քաղաքմը Լուզաձիային մէջ.

Ապրիլի 26ին գիշերը եղաւ մէկ սաստիկ կրակմը Փլօսս ըսված գեղին մէջ, Նէուշթատին սահմանը, Մէնօ գետին շրջանակները. 2 սահաթվան մէջ այրեցաւ 119 տուն, 76 ցորեննոց, 27 ալ ախոռ.

(Օրագր. Փարիզու.)

Աւգուստա. 8 Յունիսի.

19էն մինչև 26 եղած պատերազմներուն մէջ Մոսկովներուն ու Պռուսներուն կորսնցուցածը մեռնօղներով վիրաւորվածներով՝ կըհասցընեն էն քիչ 80 հազար հոգիի.

(Մօնիթօռ.)

ՄԵԾ

## ՄԵԾ ՏՈՒԳԱՅՈՒԹԻՒՆ

Ֆռանքֆօռթի :

Ֆռանքֆօռթ. 8 Յունիսի :

Ընդհանուր գաղեթային մէջը կըկարդացվի աս հետեւեալ տեղեկութիւնը՝ որ գրված է Մօնաքօյին խապարներուն տակ : Ամսուս 21ին Էլսինկֆօռսէն (որ կըթարգմանի ձգաչափ) գործիքը, որով որ կըչափվի շարժին սաստկութիը, ցըցուց թէ շարժ եղաւ. և աս շարժմունքը որ տեսնըվեցաւ գործիքին վրայ է կէս գծաչափ, որով կիմացվի թէ խիստ թեթեւ շարժ եղեր է, և ինչպէս կերեւնայ եղերէ հարաւէ դէպ 'ի հիւսիս :

(Օրագր. Փարիզու :)

## ՄԵԾ ՏՈՒԳԱՅՈՒԹԻՒՆ

Վիէննայէ :

Վիէննա. 9 Յունիսի :

Մայիսի 30ին հրատարակվեցաւ աս հետեւեալ ծանուցման թուղթը :

" Մէկ պզտիկ Պռուսի զօրաց խումբմը որոնք դուրս կըտրըված էին մեծ բանակէն՝ կընեղեն կոր Ռօտաին շրջանակները, և կսպառնան նաև մանալ աս տեղին սահմանագլուխները, անոր համար աս տուգայութե գլխաւոր կառավարը որչափ որ իրեն ձեռքէն կուգայնէ կաշխատի ապահովցընելու համար զօրքը և զօրաց կահկարասիները, ոտ զի մէկ վնասմը չքաշէ թշնամիներէն, որով և կըցըցընէ բացայայտ կերպով իրեն յարումը ու մէկ սիրտ ըլլալը Նաբօլէօն կայսեր հետ՝ որ է զօրաւոր պաշտպանը բոլոր Ռէնօին դաշնակիցներուն. աս բաներուս համար ժողովրդեանը կըհրատարակենք հրամանաւ վերնագունից աս հետեւեալ ծանուցումը :

1. Ո՛ և իցէ մարդ աս տեղի բնակիչներէն խօսքը մէկ տեղ դրած թշնամիին հետ կիմացընէ անոնց մեր զօրաց դիրքը, առաջ երթալը, ետև երթալը և կամ ուրիշ զօրաց վերաբերեալ բաները, կամ կըպատրաստէ անոնց կերակրոյ պաշարներ՝ սեպվի իբրև մէկ մատնիչմը, և սաստիկ պատժըվի օրինաց կեօրէ :

2. Ամէն բնակիչք կամ հասարակութի կըպարտաւորին համար տալու հանդերձ սաստիկ պատժով՝ եթէ չիպահեն ու չիպաշտպանեն զ՛ և իցէ անձմը և կամ ուրիշ բանակի կամ զօրաց վերաբերեալ բաները թշնամիին յափշտակութէ, և կամ չիմացունեն քուրիէռներով մօտիկ եղած քաղաքներուն ինչ վնաս կրընայ պատահիլ թշնամիին մօտենալովը, և կամ չըխրկեն անոնց դէմ մէկ պզտիկ խումբմը :

3. Ամէն հասարակութի կամ գեղ որ ունի երկու հազար հոգիէն աւելի, կըպարտաւորի հաստուցանել Ֆրանսըզի զօրաց քաշած վնասը իրեն սահմանին մէջ, եթէ աս վնասը պատահի անհոգութէ և կամ անուշադրութէ աս պզտիկ թշնամիներուն դէմ խրկըված խումբին :

4. Ամէն հասարակութի կամ գեղ՝ որոնց բնակիչքը է երկու հազարէն աւելի, կըպարտաւորի ապահովութե համար շուտմը ոտք հանել ազգային գունդմը՝ որոնց վրայ դրվի մէկ գլխաւորմը 'ի գործ դնելու համար աս հարկաւոր ծառայութիը. աս ընտրված գլխաւորը գայ հոս՝ ասկից առնելու համար հաստատութիը իրեն գլխաւորութե :

5. Աս ազգային ոտք ելած պահապան գունդը զինուորած պիտի ըլլայ թիւֆէնկով ու սուրով :

6. Ամէն պաշտօնատէրք, մագիստրօսք են, կըպարտաւորին համար տալու թէ որ 'ի գործ չիդնեն շուտմը աս կարգաւորութիները :

Հաստատեալ. Քաղաքական կառավարութիը Տուգայութե :

(Օրագր. Կայսեր :)

## ՆԵՄՑԻՍՏԱՆ.

Վիէննա. 5 Յունիսի :

Մէկ թագաւորական քուրիէռմը հասաւ հոս Կիթաքհէն, ու խապար բերաւ թէ Նեմցէին կայսրը հասաւ հոնտեղը կատարեալ առողջութե. աս նամակաբերը ունէր իրեն հետ մէկ ուրիշ թուղթմըն ալ որ գրեր էր կայսրը իրեն ձեռքով և կըհրամայէր որ շուտով մը խրկըվի իրեն երկու աշխարհական պահապան զօրաց գունդ, աս հրա-

հրամանը շուտմը պիտոր 'ի գործ դրվի ։ Կայսերական հանդիսի առատպաները կը պատրաստվին կոր․ և կըմակաբերվի թէ քիչ ժամանակէն Նեմչէի Կայսրուհին Բրակայ պիտոր երթայ ։ Ինչպէս որ կըհաստատեն Գալիճեայի ստոյգ խապարները, քիչ ատենէն ասը պիտոր հանէ նորէն աս տէրութինը 40 հազար զօրք ։ (Գազէթ․ Փրանս․)

## ՄԱՃԱՌՍՏԱՆ․

### Օւֆէնպուռկ․ 3 Յունիսի ։

Ամսուս 3ին, սահաթը կէսօրը 3 ուկէսը անցած, երկու անգամ շարժ եղաւ, իւրաքանչիւր անգամ ալ սաստիկ ցնցըվեցաւ․ շատ տուներու մէջ կախ կարասիները տեղերնուն շարժեր ուրիշ տեղ գացերեն աս ցնցումէն․ ան անձինքները որ գըտնըվերէն սանդուխներու վրայ՝ շարժին ժամանակ, բռնադատվերեն կենալու՝ աստիճաններուն սաստիկ ցնցմանը համար․ պատուհաններուն ճամերը շարժերէ ինչպէս որ կըցնցըվի մէկ մօտիկ տան նետված թօփիմը ձայնէ․ խուցերուն յատակները մինչև կըվախցըվէր թէ բըլլի ։ (Օրագր․ Կայս․)

## ՓՐԱՆՍԱ․

### Փարէզ․ 15 Յունիսի ։

### Կայսերական Վճիռները ։

Նափօլէօն կայսրը 1809ին վճռեց, թէ ով որ կարենայ հանել մէկ գիրքմը զուտ գալիանի ոճովէ՝ անոր կուտայ 4 հազար խուրուշէն աւելի․ շատ մարդ ետևէ ինկաշխնելու հմր աս գիրքը․ բայց աս գիրքերը երբոր ներկայացան Քրուսքա ըռված ճեմարանին առջևը, և ճիշտ քննութին ընելէն ետև, արժանի սեպվեցաւ վարձք տալու միայն 3 գիրքի հեղինակներուն․ աս գիրքերուն մէկը էր Քայօսի-Կուռնէլիոսի-Տակիտոսի Լատինացւոց երևելի հեղինակին գործքը՝ (որ է պատմութին հռովմայեցւոց) ու թարգմանվեցաւ լատինէ 'ի գալեան ։

Երկրորդը էր Ովրատիոսի երկու գրոց երգիծական բանաստեղծութե̄ թարգմանութինը հանդերձ վերնագիրներով, նմանապէս թարգմանութինը նոյն Ովրատիոսի թուղթին՝ որ կըգրէ Բիզօնացիներուն բանաստեղծութե̄ արհեստին վրայ ։

Երրորդը էր Պսակներ՝ որ է Անտառային բանաստեղծութին ։ (Մօնիթօռ ։)

Նափօլէօն կայսրը երբոր Տրէզտա էրնէ վճռեց յունիսի 13ին, թէ 3 հազար ղրշ̄ տրվի թագաւորական գանձէն Լոկուանժ երևելի մեռած մաթէմաթիգօսին կընկանը՝ 'ի շնորհակալութին գերազանց ծառայութիներուն՝ որ իր մեռած էրիկը Լոկուանժ ըրաւ գիտութեց ու ուսմանց մէջ․ աս եկամուտքը կէսիրը է առատաձեռնութինը Նափօլէօն կայսեր, անկախ ան եկամուտքէն՝ որ շնորհած է աս կընկանը ծերակոյտէն ։

## ԻՏԱԼԻԱ․

### Վէնէտիկ․ 8 Յուլիսի ։

Այսօր ամսէն մինչև յունիս մաւ Վէնէտիկի նաւահանգիստը 452 մանր ու խոշոր վաճառականի նաւ բեռնաւորած զանազան ապրանքներով․ նմանապէս 380 վաճառականի նաւալ ելաւ երթալու համար զանազան նաւահանգիստներ ։

Որովհետև հիմայ Վէնէտիկին նաւահանգիստը եղաւ ազատ նաւահանգիստ փօռթօ փռանկօ, հրաման տուաւ տէրութե̄ պաղիկեաններուն ատեանը շինելու համար իրեն ծախքով մէկ մեծ տեղմը, ուրտեղ դնեն ան ամմէն դուրսէ եկած ապրանքները՝ որ չիծախվինպիտոր քաղքին մէջ ։ Վաճառականները որոշեցին իրենց տեղ անմիջապէս քաղքին առջևի եղած կղզիին մէկ մասը․ աս տեղիս անունը կըկոչվի կղզի սէ̄յն գէորգի ։ շինեցին մեծ ու փառաւոր շինուածք շատ մաղազաներով, շինեցին նմանապէս աս շինուածքին առջևը մէկ մեծ հաւուզմը ներսէն դուրսէն բոլոր քարաշէն․ աս հաւուզին մէջը կըմըտնի 14 կմ̄ 15 վաճառականի նաւ․ ունի երկու դուռ, մէկէն կըմըտնայ նաւը ու կըպարպէ իրեն ունեցած բեռը և մէկալէն ալ դուրս կելլայ ։

---

Աս գործքս՝ որ է պատմութի̄ հիմակվան ատենիս, տասնըհինկ օրը մէյմը կըտըպվի․
'ԻՎԷՆԷՏԻԿ 'ԻՎԱՆՍ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ ։